ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թվականի մայիսի 11-13-ը Վենետիկ գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արև ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Վենետիկ (Իտալիայի Հանրապետություն), մայիսի 11-13-ը, 2017 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Վենետիկի «Viva Arte Viva» խորագիրը կրող արվեստի 57-րդ միջազգային բիենալեին

Հայ-իտալական մշակութային համագործակցության շրջանակներում 2017թ. մայիսի 11-13-ը մեկնեցի Վենետիկ (Իտալիայի Հանրապետություն)՝ մասնակցելու Վենետիկում «Viva Arte Viva» խորագիրը կրող արվեստի 57-րդ միջազգային բիենալեին: Միջոցառման պաշտոնական բացումը տեղի ունեցավ մայիսի 13-ին: Բիենալեն կտևի մինչև ս. թ. նոյեմբերի 26-ին:

Նշյալ միջոցառմանը Հայաստանը ներկայացրեցին արվեստագետներ Ռաֆայել Մեգալը, Ժան Պողոսյանը և Միրո Պերսոլյան: Հայաստանյան տաղավարը գտնվում էր Վենետիկի Մուրադ Ռաֆայելյան վարժարանում և Սուրբ Խաչ եկեղեցում:

Մայիսի 11-ին՝ ժամը 17.30-ին, կայացավ ցուցահանդեսի բացման պաշտոնական արարողությունը և լրատվամիջոցների համար կոնֆերանսը, որը վարեց բիենալիե հայաստանյան հանձնակատար Ս. Սահակյանը: Ներկա էին նախագծի համակարգող Ք. Մասելը, Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վ. Բաղդասարյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, Իտալիայում

հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչներ, արվեստագետներ, մտավորականներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Իմ ողջույնի խոսքում կարևորեցի Վենետիկի արվեստի 57-րդ միջազգային բիենալեին Հայաստանի մասնակցությունը, նշելով, որ Հայաստանի տաղավարի բացումն ազդարարվել է երեք տարբեր արվեստագետների աշխատանքների ցուցադրությամբ: Ներկայացված աշխատանքների ընդհանուր գաղափարն է՝ մարդկության և բնության ընդհանրությունը, արվեստի անսահմանությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վ. Բաղդասարյանը, Վենետիկի Մխիթարյան միաբանության տեսչապետ Լ. Զեքյանը, Բիենալեի հայաստանյան տաղավարի երեք համակարգողները՝ Դեմետրիո Պապարոնին, Բրունո Կորան և Ջիորջիո Գրասսոն:

Վենետիկի արվեստի 57-րդ միջազգային բիենալեին մասնակցում էին արվեստագետներ շուրջ 80 երկրներից: Նրանցից յուրաքանչյուրը Բիենալեի այցելուներին ներկայացրեց իր ցուցադրությունը:

Երիտասարդ և տաղանդաշատ գեղանկարիչ ***Ռաֆայել Մեգալը*** (համադրող՝ Դեմետրիո Պապարոնի) ներկայացավ ***«Հովազներն իմ ծաղկած այգում» ցուցադրությամբ***: Ցուցադրվեց մեկ միասնություն կազմող 15 աշխատանք:

Լիբանանահայ (ներկայում բնակվող Բրյուսելում) քանդակագործ և նկարիչ ***Ժան Պողոսյանը*** (համադրող՝ Բրունո Կորա) Վենետիկի արվեստի 57-րդ միջազգային ցուցահանդեսում ներկայացավ ***«Անշեջ կրակ» խորագիրը կրող ցուցադրությամբ՝*** ներկայացնելով վերջին շրջանի իր աշխատանքները, որոնք ստեղծվել են ամենատարբեր տեխնիկաներով և նյութերով՝ կրակ, հուր, խանձվածք, գունանյութ և ջուր:

Հայկական տաղավարի 3-րդ մասնակիցը ազգությամբ սլովենացի, ներկայում Իտալիայում ապրող և ստեղծագործող ***Միրո Պերսոլյան*** է: Նրա ցուցադրությունը կրում էր ***«Առանց սահմանի» խորագիրը*** (համադրող՝ Ջիորջիո Գրասսո):

Հայաստանյան տաղավարն այցելեցին Ամերիկայի Արևելյան Թեմի Առաջնորդ Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյանը, ինչպես նաև բիենալեի ժյուրիի անդամները:

Մայիսի 12-ին այցելեցի բիենալեի շրջանակներում ներկայացված Giardini և Arsenale տաղավարներ:

Վենետիկի 57-րդ արվեստի միջազգային բիենալեի հաղթող է ճանաչվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության ազգային տաղավարը:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ բիենալեի գրասենյակի ներկայացուցիչներին նվիրաբերվեց հայաստանյան տաղավարում ցուցադրված արվեստագետների աշխատանքների երեքական կատալոգներ:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
  - ✓ ***Մասնակցությունը Վենետիկի արվեստի 57-րդ միջազգային բիենալեին հնարավորություն ընձեռեց ևս մեկ անգամ հանրահռչակելու Հայաստանի ժամանակակից արվեստն արտերկրում:***
  - ✓ ***Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիկտորիա Բաղդասարյանի հետ կայացած զրույցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց.***
    - ***լրամշակել հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի նիստի օրակարգը,***
    - ***նախապատրաստել ստորագրմանը հայ-իտալական միջգերատեսչական ծրագրի նախագիծը,***
    - ***հստակեցվեցին հայ-իտալական վերականգնողական կենտրոնի ստեղծման հետ կապված մանրամասները:***

Կցանկանայի շնորհակալությունս հայտնել Իտալիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիկտորիա Բաղդասարյանին և դեսպանության ողջ աշխատակազմին՝ գործուղման կայացմանն աջակցելու և հանդիպումներին մասնակցելու համար:

Արև ՍԱՄՈՒԵԼՅԱՆ